

նաև տեղը իւր անունը ստացաւ Փարսխոտ: Այստեղում բնակիրը վնասված է և նորա մնացորդ որդիների անունները բայ են թողված:

Ամասիան ոչինչ արժանայիշատակ գործ չէ արած, բացի նորանից, որ նա իւր անունով սարը Մ-ի անուանեց, թէև մեծ նմանութիւն այստեղ ևս չենք գտնում: Սերէոսի մէջ (նոյնտեղ) ուրիշ տեսակ կիսօսվի այսինքն թէ Ս-ի սարը իւր Մ-ի անունը ստացած է միւսնոյն վերոյիշված Մարսեակից: Այս երկու նմանութիւններն արժեն մին միւսին:

Պէտքէ նկատել, որ Հայերը Մասիս բառը յոգնակի կհօլովեն, թէև անհասկանալի է, թէ ինչի միայնակ զագաթը կարող է իւր մէջ բազմութեան զաղափար բովանդակել: Արաք անունն ևս յոգնակի կհօլովեն որովհետև տառը Հայերի մէջ յոգնականացուցիչ է: Դեննք թէ Հայաստանի սահմաններում գտնված տեղերի անունների մէջ, բառի վերջ տառ լինելով, լեզուի յատկութեան համաձայն կարող էր ստիպել յոգնակի հօլովելու բառերը: Բայց հայկական մատենագիրների ակնհիշ սխալն այն է, որ նորա յոգնակի թուով կհօլովեն նաև օտարական քաղաքների անուններն ևս, որոնք տառով կվերջանան օրինակ Թիֆլիս և Պոլիս վերջաւորված քաղաքները, օրինակ Թէոդոսիօպոլիս և ըն:

(Վերջը Դ-ի անգամ): . .

Ս. Տ. Գ.

ԱՆԳԼԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ.

(«Արարատ» 1880, յունիս):

Դպրոցական կեանքի առանձնապէս յատուկ երևոյթն է լաւագոյն աշակերտների հսկողական կարգը: Արդեն ասացինք թէ աշակերտները վայելումեն լիովին ազատութիւն, բայց անդիւիացիների կարծիքով, խոհմարաբ օգուտ են քաղում այս ազատութեանից միայն այն մանուկները, որոնք դպրոցի մէջ անցուցել են մի երկու տարի: Դպրոցներում չկան ոչինչ վերականգնելու ուստի և բարձր դասարանների լաւագոյն աշակերտները մօնիաօրներ, պարտաւոր են հսկել որ դպրոցի կարգն ու կանոնը ճշգիւ կատարեն փոքրիկ աշակերտները: Նորա պարտաւոր են նայել փոքրներին, որ չլսեն, աղաղակ չհանեն, փողոցները քար չձգեն, գինեւուն չմտնեն, չծեծեն իւրեանց թոյլ ընկերներին, մի խօսքով ոչ մի կերպով չքանդեն դպրոցական կանոնները: Այս կարգն աւելի վատ կողմեր ունի քան թէ լաւ: Փոքրներին նայող, շատ անգամ և խստիւ պատժելու իրաւունք ունեցող, իսկ քանի մի ուսումնարաններում մինչև իսկ մարմնաւոր պատիժ տուող, երիտասարդը յափշտակվումէ յաճախ իւր պարտաւորութեամբ և խանգարումէ իւր բնաւորութիւնը: Նորա մէջ զարգանումէ սնապարծութիւն, բիրա բնաւորութիւն, պաշտօնական, իշխողական վարմունք և սեր դէպի բնաւորութիւն: Տասն և վեց տասն և եօթն տարեկան երիտասարդները շատ հազիւ են ունենում ողջմտութիւն և փորձառութիւն, ո-

որոնք այնքան կարեւոր են ուրիշներին կառավարելու համար, այսինքն նորա կամ չափազանց ներողամիտ են և ժամ չափազանց խիստ: Ըստ անգամ նորա պատիժներ են նշանակում, իւրեանց բարկացած միջոցում, որովհետեւ զեռ ևս ձեռք չեն բերած կարեւոր համբերատարութիւն և օտուարիւնութիւն, մինչդեռ իշխանութեան բարկութիւնը և զայրացումը ստորադրվածի մէջ ևս միևնոյն զգացմունք է յարուցանում: Սակայն անգլիացիները հնարաւոր չեն համարում ոչնչացնել մօնիտորիական կարգը, որովհետեւ նորա չունին վերակացուներ, որոնք կարող լինէին հսկել մանուկներին դասարանից դուրս:

Այս զգրոցներում կրթութեան ամենատեսուր կողմերից մին ևս fagging է այսինքն փոքր աշակերտների ծառայական պաշտօն վարելը (fag = ծառայ): Բարձր դասարանի իւրաքանչիւր աշակերտն իրաւունք ունի ծառայեցնելու մի կամ քանի մի մանուկներ: Այսպէսով մեծ աշակերտը միշտ տէր է իսկ փոքրը նորա ծառան: Մեծ աշակերտը տեսնելով ստորին դասարանի մանուկի խելացիութիւնը և արթնութիւնը, ուղղակի ասումէ նորան. « դու ինձ պիտի ծառայես »: Այդ բոլորից սկսած կրտսեր աշակերտը լինումէ ընդորովին ծառայ մեծին: Fag սկսումէ կատարել իւր պարտնի բոլոր յանձնարարութիւնները, վազումէ նորա համար այս այն քանի ետեւից, մաքրումէ նորա զգեստը, սրբումէ նորա սեղանի փոշին, տանումէ նորա զրքերը դասարան, զարթեցնումէ նորան առաւօտեան նախընթաց օրը նշանակված ժամին, պատրաստումէ նորա լճէյը, չորացնումէ հացի կտորներ, ներկայ է գտնվում նորա խաղերին, իրաւունք չունենալով ինքն մասնակցելու նոցա, այլ միայն նորա համար, որ գնդակները իւր տիրոջ շուտ հասցնէ: Նա պարտական է միշտ պատրաստ լինել վազելու և նորա ձայնի վերայ հասնելու: Ուստի կրտսեր աշակերտների կեանքը անգլիական գրոցներում մեծ մասամբ շատ դժբաղդ է: Մեծերին ծառայելու սովորութիւնը ոչ միայն խլումէ նոցանից իւրեանց ազատ ժամանակները, այլև արգելք է լինում նոցա սովորելու, շատ անգամ և օրինաւոր կերպով ուսելու, զրկումէ նոցա ուրախութիւններից և վայելչութիւններից, որոնք այնքան գրաւիչ են մանկութեան հասակում:

Փոքր մանուկը երբէք չէ կարող հաստատ կարծել, թէ դպստից յետոյ մի կրկու ժամ կարող է դբօսնել, խաղալու գնալ կամ դուրս սովորել: Նորան կարող են ամեն բոլոր ձայն տալ և բազմաթիւ յանձնարարութիւններ անել, եթէ մանուկը փոքր ինչ ուշանայ կամ իւր վերայ դրված յանձնարարութիւնը ճշդութեամբ, չկատարէ իսկոյն կտրանայ իւր տեղից մի փառաւոր ապտակ: Փոքր աշակերտները առաւօտեան պարտական են շատ շուտ վեր կենալ, երկու, երեք ժամ իւրեանց հրամանատարների զարթելուց առաջ: Նոքա պարտաւոր են ամեն բան պատրաստել, նոցա համար ջուր տաքացնել, կրակ վառել: Ըստ անգամ երիտասարդ հրամանատարն կպատուիրէ զարթեցնել իւրեան և ժամին, մինչդեռ վեր է կենում հազիւ 7/ ժամին: Ուստի խեղճ մանուկը պիտի իւրաքանչիւր քա-

ուրդ ժամը յիշեցնէ զարժեկու մասին: Բայց սա դեռ քիչ է, ծառայելով մինին, մանուկը միշտ պարտաւոր է պատրաստ ընել ծառայելու այն բոլոր մեծ աշակերտներին ևս որոնք նորան կպատուիրեն: «Նորեկ» կանչումէ նոցանից մին և բոլոր նորեկները շտապով վազումեն մեծերի դահլիճը: «Ժամը քանի՞սն է» հարցնումէ մեծը: Նորան պատասխանումեն: «Էնք որպէից յետոյ մի ուրիշ մեծ աշակերտ կրկին կանչումէ: «Է՛ր դուք նորեկներ, եկէք այստեղ ժամը քանի՞սն է»: Կրկին դէպի նոյն դահլիճը վազումեն բոլոր նորեկները, կրկնվումէ նոյն հարցը և միևնոյն պատասխանը:

Մեծ աշակերտները շատ սիրումեն լժէյ և սուրճ և փոքր աշակերտները օրը քանի մի անգամ պարտական են պատրաստել նոցա համար լժէ մին և լժէ միւսը: Եւրաքանչիւր երկու բազէ փոքր աշակերտը պիտի լցնէ մեծերի հեշտաւոր: Իսկ եթէ եռաձ ջուրը պակասի, անխղճաբար ձեծումեն մանուկին: Ապտակներ, բռնցի, ոտով, փայտով և ձեռներին քանոնով հարուածներն այստեղ սովորական գործ են: Գծուար է երեակայել լժէ ինչպէս երբեմն անպատիժ և անգլխարար ծաղրումեն մեծ աշակերտները կրտսերներին: Մեծերը ձեծումեն փոքրներին ոչ միայն այն ժամանակ, երբ նոքա նոցա յանձնարարութիւնները ճշդութեամբ չեն կատարում, այլև այն ժամանակ, երբ նոքա չեն կարողանում խօսել նոցա հետ արժանի յարգանքով և քաղաքավարութեամբ: Կրտսերների այս նուրբ վարմունքի և քաղաքավարութիւնների բառերիցը մեծերի վերաբերմամբ շատ մեծ է: Օրինակ կատարելով յանձնարարութիւններից մին և յայտնելով այս մասին իւր հրամանատուին, մանուկը պարտաւոր է ասել բառ առ բառ «կամենո՞ւմէք արդեօք դարձեալ բան ստանալ»: Եթէ մանուկը այս փոխէ կամ տեղափոխէ մի բան ևս, իսկոյն ապակ կստանայ: Արովհետեւ այսպիսի ձևեր մօտ 30 կամ 40 են, իսկ նորեկները դժուարութեամբ են յիշում, ուստի նոցա յաճախ հարուածներ են տալիս, մեծերի հետ խօսել չիմանալու համար:

Եւրաքանչիւր իւր (սպասաւորը) պարտաւոր է խորին կերպով ուսումնասիրել իւր հրամանատուի բնաւորութիւնը և սովորութիւնները: Եթէ իւր մոտացկոտ է, նա պարտական է միշտ իւր մօտ գրպանում լծանաքաման, ռետինի կտոր, զրիչ և լծուղծ ունենալ: Այս ամենը նա պիտի ունենայ, որովհետեւ մեծերը յաճախ կարօտութիւն ունին: Առաւել օտարօտին այն է, որ նորեկներին այդպիսի պատիժներին ենթարկող երիտասարդները ընդհանրապէս չոր բնութեան տէր չեն: Նոքա լաւ յիշումեն իւրեանց անցեալը, յիշումեն լժէ ինչպէս իւրեանց ձեծումէին և նոցա ծաղրումէին և յարմար են համարում, որ իւրեանք ևս իւրեանց կողմից միևնոյնը անեն: «Այս կարգը, ասումէ մի մատենագիր, սարսափների ժամանակամիջոց է յիշեցնում»: Նորեկները դողումեն և հնազանդումեն, նոցա բնաւորութիւնը կոտրվումէ, ուրախութիւնը կորչումէ, չեն ունենում տրամադրութիւն ոչ ուսման և ոչ խաղի: Մանուկի առաջին տարին չէ անցնում նորա համար օգուտով, այլ վնասով, որովհետեւ այս միջոցին

յաճախ նա մոռանումէ մինչև անգամ այն, ինչ որ նորան սովորեցրած են տանը: Բոլոր կրտսերներն աշխատում են քանի մի շաբաթ գնալ Հիւանդութեան պատրուակով տուն կամ Հիւանդանոց, իրրեւ ապաստանարան: այս օրհասական առաջին տարու մի մասը դոնէ դպրոցից դուրս անցուցանելու: Ականատեսներից մին պատմումէ, որ շաբաթ երեկոները, երբ Աւետմիւստէրեան դպրոցից արձակումէն, իւր օրդին տուն դալուն պէս ամենից առաջ գնումէ քնելու: այնքան յոգնած է նա անքնութենից: :

Արտսեր աշակերտների այս տեսակ դրութիւնը անգլիական դպրոցներում ոչնչով համարեա չէ զանազանվում Ռուսիայի մէջ տիրող նախկին ստրկական դրութենից:

Դպրոցների ուսուցիչները հոգեւորականներ են: Բայց անգլիական եկեղեցու հոգեւոր կոչումն իւր հոգեւորականների վերայ ոչ կուսակրօնութեան, ոչ առանձին հազուստի պարտք է դնում, բացի սպիտակ փողապատ կրելուց: 2-րայելով համարարանական ուսմանը, այստեղի ուսուցիչները մասնագիտական ուսմամբ չեն պատրաստվում իւրեանց պաշտօնի համար, ուստի նոքա կամ յարմարեցնում են իւրեանց սեփական եղանակը և կամ առաջնորդվում են իւրեանց նախորդի փորձերով:

Ուսուցչի պարտաւորութիւնները չափազանց դժուար են: Նա պարտւումէ շաբաթը 20—24 ժամ դասերով, բացի դորանից իւրաքանչիւր օր 2—3 ժամ ուղղումէ գրաւոր աշխատութիւնները, և դասերից դուրս պարտւումէ մասնաւոր աշակերտների հետ: Այստեղի ուսուցիչները բոլորովին զբաղած են դասերով կամ դասերի կրկնողութեամբ առաւօտեան 7 ժամից մինչև երեկոյեան 10 ժամը: Նոքա նախաձաշում են և ծաշում են մանուկների հետ և այս պատճառով նոքա չեն ունենում մի ազատ րոպէ և համարարանի մէջ ստացած իւրեանց ուսումն չեն կարողանում ոչ մի կերպով լրացնել: Ուսուցիչն որքան և խելացի լինի, որքան և գերազանց ուսումն ստացած լինի, եթէ նա դադարումէ նոր անգլիկոմիւններ ստանալու և ընդարձակելու իւր գիտութեան սահմանը, նորա մտաւորական աճումն դադարումէ: Այսպէս է լինում այստեղ ևս:

Ուսուցիչների վարձատրութիւնը շատ մեծ է: Թէպէտև ուսումնարանից նոքա սակաւ ուժիկ են ստանում, Հարկաւոր է նկատել, որ ուսուցիչների եկամուտը ուսումնարանին նայելով զանազան է:

Հարրօի դպրոցում աւագ ուսուցիչը ստանումէ դպրոցի վարչութենից 187 մ. ուժիկ և 125 մ. վառելիքայտի համար: Բացի սորանից նա ստանումէ 75 մ. իւրաքանչիւր թոշակաւոր աշակերտից դասարանական պարտաւորւելի համար և առանձնապէս իւրաքանչիւր գիշերօթիկից: Երբ գիշերօթիկներն աւելի են լինում, ուսուցչի եկամուտն ևս մեծանումէ: Աւագ ուսուցչի իսկական եկամուտը Հարրօի դպրոցում հասնումէ 6,288 ստերլինգի տարին: այսինքն մեր փողով մօտ 39 հազար մանէթի:

Միւս ուսուցիչներից Հարրօում մին ստանումէ զուտ եկամուտ 15,937 մ. միւսը—6,500 մ. Ֆրանսական լիզուի ուսուցիչներից մին, որը միայն

երեք գիշերօթիկներ ունի առնուած 4,175 մ. : Աերջապէս գիշերօթիկ զարոց շունեցող օգնական ուսուցիչը ստանուած աւագ ուսուցչից մշտական վարձ 300 ֆ. ստերլինգ այսինքն մեր փողով մօտ 1800 մ. : Իստոնում աւագ ուսուցիչը ստանուած բոլոր ծախսերն հանած, զուտ մուտք 4,500 ֆ. (28,125 մ.) : միւսնոյն ժամանակ նա ունի և մի փառաւոր անվարձ տուն, որի համար նա մինչև իսկ օրէնքով նշանակված տան հարկը չէ տալիս : Միացած ուսուցիչները Իստոնում 44 ֆունտից (275 մ.) աւելի շտանալով ոտճիկը, 10 հազար մանէթից աւելի եկամուտ ունին, եթէ նոցա պանսիօններում աշակերտների թիւը լրացած է :

Այստեղից պարզ երևումէ, որ ուսումնարաններում մուտքի քանակը բոլորովին փոփոխվումէ նայելով թէ նորա ունին գիշերօթիկներ թէ ոչ : Ս. Պօշտի զարոցում, որը հիմնված է միայն երթևեկ աշակերտների համար, ոտճիկները այսպէս են. աւագ ուսուցիչը առնուած 5,625 մ. : միւս ուսուցիչները 2,500, 2,175, 1,875, 1,250, 925 և վերջապէս 625 մ. :

Մինչև վերջին տարիներ զլխաւոր առարկաները հին լատինական և յունական լեզուներն էին : Անգլիացիների կարծիքով, փոքր հասակում ուսումը խելքի վարժմունքի մէջ պիտի կայանայ : Մատնաստիկական դիտութիւնները գրեթէ բոլոր քերականական զարոցներում երկրորդ տեղ են բռնում, բնական գիտութիւնները և նոր լեզուները—ամենավերջին տեղ :

Նոր լեզուներին շատ քիչ ժամանակ են նուիրում և նոցա առանձին նշանակութիւն չեն տալիս : Սկզբում նոր լեզուներ բոլորովին չէին ուսուցանում : Մինչև իսկ Փրանսական լեզուի դասատուութիւնը Իստոնեան զարոցում սկսված է սորանից մօտ հինգ տարի առաջ : Իսկ նոր լեզուներով խօսելը ամենեւին չեն սովորեցնում : Նոր լեզուների ուսուցիչներն ևս իւրեանց գործը եռանդով առաջ չեն տանում : Մայրենի լեզուի ուսումը մի փոքր աւելի է : Տեսականապէս իբրև առանձին առարկայ նորան գրեթէ չեն ուսումնասիրում : Մանուկները ծանօթանումեն մայրենի լեզուի հետ աւելի գործնականապէս այսինքն հին և նոր լեզուներից թարգմանութիւններ աւելով իւրեանց մայրենի լեզուով, ընթերցանութեամբ, ոչ միայն արձակ, այլև ոտանաւոր շարագրութիւններով : Անտիր շարագրութեան և ոտանաւորի համար շատ անգամ վարձատրու մեն : Ահա ինչ են ստում սորա մասին այս զարոցներն առանձնապէս ուսումնասիրող մարդիկ : «Անպարտադիր հետեապէս անկապ և ընդհատ պարապմունքի միջոցով, աշակերտներն ազգային մատենագրութենից ևս մի բան են սովորում : Եթէ անգլիական երեկի մատենագիրների յայտնի հռչակը չլինէր, եթէ դասերից դուրս ընթերցանութիւն չլինէր և յունական և լատինական ոտանաւորներով ազգային բանաստեղծների լաւ կտորների թարգմանութիւնը չլինէր, կարող էր հեշտութեամբ պատահել, որ երիտասարդ անգլիացին աւարտելով իւր ուսումը քանի մի ուսումնարաններում և մինչև իսկ համալսարանում որտեղ ուսումը աւարտվումէ, չէր իմանայ թէ Անգլիացում եղել են Սպէնսեր, Միլտոն, Էէկսպիր, Բայրոն : Աերջին տարիներում հին լեզուների

վերայ հայկացիքը բաւական փոխակցաւ և այժմ այնչափ կարեւորութիւն չեն տալիս նոցա:

Թէպէտ բաւաշակիրանները սովորաբար լաւ դիտեն պատմութիւն, բայց երբէք դաս չեն տալիս իրրեւ մի առանձին առարկայ և պատմութեան համար առանձին ուսուցիչներ չկան: Այն դպրոցներում, ուր բոլորովին չեն ուսուցանում պատմութիւնը, ոչ հինը և ոչ նորը, տալիս են աշակերտների ձեռին դրքեր և ասումեն. «այս ինչ օրը այս ինչ պատմական ժամանակի վերայ շարադրութիւն պիտի նշանակվի պատրաստակցէք»: Այսպիսի շարադրութիւններ ընդհանրապէս տալիս են արձակուրդի ժամանակ: Սակայն այս առարկայի համար յօրինումեն միջմուշիք և պատմութենից լաւ շարադրութիւն գրող աշակերտները պարգև են ստանում: Չնայելով սորան երբեմն աշակերտներն ընտիր շարադրութիւններ են գրում պատմութենից: Մտաւոր կրթութեան այս տեսակ սիստեման յիշեցնումէ Սպարտացիների ֆիզիքական կրթութիւնը այսինքն նա զօրացնումէ ընդունակներին և զօրկշիւրին և անխնայօրէն կործանումէ թոյլերին և սակաւ բնգունակներին:

Մասնաւորիւն մուծված է միայն վերջին ժամանակս, 30 տարի առաջ, իսկ քանի մի ուսումնարաններում 20 տարի առաջ:

Բաւական շատ դիտութիւններն, դպրոցների մեծ մասի մէջ, արհամարհանքով են նայում, ինչպէս երբեմն մատեմատիկային, այսինքն բաւականաւորումեն միայն նորանով, որ որոշված ժամանակին հրաւիրումեն բնագետին քանի մի դաս կարդալու այս առարկայից այն աշակերտներին, սրտիք ցանկանումեն ունկնդիր լինել: Սակայն Բօգրին բացառութիւն է կազմում և բնական դիտութիւններն այս ուսումնարանում առաջ են գնում բաւական յաջող:

Թէև այսպիսի կարգ է տիրում անգլիական միջին դպրոցներում, այնուամենայնիւ նոյն իսկ այն դպրոցներից դուրս են գալիս մեծ խելքեր և դիտութեան ամենայն ճիւղերում բոլոր Եւրոպայի մէջ հռչակված գիտուններ: Թէպէտ ճիշտ դիտութիւնները և բնագիտութիւնը արհամարհումեն, բայց կարող են ուսանել դիտութիւնները իւրեանց դասընթացից դուրս: Երիտասարդները եռանդով են ուսանում այն գիտութիւնները, որոնց հակումն զգումեն նոյն իսկ մանկական հասակից: Այս հակմունքը խրախուսելու համար, թէ մին և թէ միւս առարկաներից աշխատել յորդորելու համար երիտասարդներին, պատեղ կան զօրաւոր միջոցներ այսինքն միջմուշիք և թանկագին պարգևներ: Սարելի է ասել, որ նաև բալթ ուսումին մի շարունակ միջումն է ներկայացնում: Այսինքն ամեն դաս մի տեսակ հարցաքննութիւն է: Ուսուցիչը ձայն է տալիս և ահա աշակերտները կիսաշրջան են կազմում կաթեղի մօտ: Այն աշակերտը, որն ամենից լաւ է պատասխանում, նոյն իսկ միջոցին առաջինն է լինում և մի քանի դպրոցներում աշակերտների այդպիսի տեղափոխութիւնը համարեա ամեն դասին է կենում: Աւագոյն ընտիր շարադրութիւնները վարձատրվումեն չքանչանով:

(մեզադով) և դրքերով 18 մանեթից մինչև 300 մ. և աւելի արժողութեամբ: Միևեոյն ժամանակ տալիս են աշակերտներին և դրամական թոշակ: Բոլոր քերականական դպրոցները յատկացնում են իւրեանց լաւագոյն աշակերտներին տարեկան 187-600 մ. երբեմն աւելի ևս: Այսպիսի թոշակը քերականական դպրոցների աշակերտները ստանում են երբեմն 4, 5 և նաև 6 տարւման ընթացքում: Ըայց այն պայմանով, որ աշակերտն իւր ուսումը չարուսակէ համալսարանների մինի մէջ: Այսպիսի հարուստ թոշակով վարձատրելով աշակերտին, աչքի առաջ չեն ունենում երբէք նորա աղքատութիւնը: Աղքատ թէ հարուստ աշակերտը ստանում է այս թոշակը, եթէ գերազանց է գտնվել քննութեան մէջ:

Այն առարկաների յառաջադիմութեանը, որոնց վերայ ուշք չեն դարձնում դպրոցում, շատ նպաստում է բարձր դասարանների աշակերտների լիովին ազատութիւնը: Հարրոում, Բոզրիում, Իսթնում աշակերտները ժողովութեան զանազան հարցեր վճռելու համար: Երբեմն երիտասարդները ժողով են կազմում հրատարակական ծառեր ասելու պատրաստ վելու նպատակով: Մի ժողովում խորհում են կառավարութեան դործունէութեան վերայ, միւսում բնական զիտութիւններ սիրողները կարդում են և խորհում գիտութեան վերայ նոր լոյս ձգող մի դրքի մասին: Քանի մի դպրոցներում աշակերտները հրատարակում են օրագիրներ, իսկ քանի մի տարի առաջ Բիրմինհամ քաղաքի Էդուարդ թագաւորի դպրոցը հրատարակում էր շաբաթական լրագիր, որը բովանդակում էր համառօտ նկարագրութիւնների, վիպասանութիւնների և ին: Իսթնում դեռ ևս յիշում են «Միկրոֆոն»-ը, որի բազմամիւ յօդուածներն ընդհանուր ուշադրութիւն էին գրաւում: Այս բոլոր օրագիրներում և լրագիրներում, ամեն ժամանակ թէ առաջ և թէ այժմ, չնայելով մատենագիրների երիտասարդութեանը, պատահում էին նշանաւոր յօդուածներ, որոնց հեղինակները վերջը յայտնի էին լինում բոլոր լուսաւորված աշխարհին: Մանկութեան օրերում անկախ կեանքը, ֆիզիքական պարսպմունքով զարգացած կազմուածքը, խելքի և սրտի համար ամենատեսակ առողջ տպաւորութիւններով լի կեանքը — ահա թէ դպրոցից առաւել ինչն է պատրաստում անդլիական երիտասարդներին լրջմիտ աշխատանքի համար: Գիտութիւնների ամենայն ճիւղերի ահագին մատենադարաններում անարգել մուտքը, հարուստ թանգարանները, դեռ ևս մանկութեան օրերում, զբօսանքի ժամանակ պարտեզներում ձեռք բերած ծանօթութիւնը կենդանիների և բոյսերի կեանքի հետ, պատմութեան և ժողովուրդների ներկայ կեանքի հետ, դործառնութեան և ամենատեսակ արհեստների հետ — բոլորը վաղ զարթեցնում են շնորհալի մանուկի մէջ լրջմիտ պարասպմունքի փափագ և հիւրք: Յիշենք դոնէ Բիւսեդեան և Ալէքսանդրեան պալատների պարտեզների մէջ զբօսանքները, Ապա ազատ հաստատութիւնները, քաղաքական դործերը, հասարակական կեանքը, աղատ խօսելը և աղատ դիմելը, իրաւունքը գիտութեան բոլոր աղբիւրներին — մանուկին կարողութեան

Թիւն են տալիս ապագայում՝ գործելու աւելի հիմնաւորապէս: Ահա այս պատճառով հարկաւոր՝ չէ դարմանալ, որ Անգլիայում, շնայելով վատ զարոյցներին, զուրս են գալիս համաշխարհային հոշակաւոր մարդիկ: Միեւնոյն ժամանակ առանձին ընդունակութիւններ չունեցող երիտասարդները մինչև այժմ՝ զուրս էին գալիս անգլիական զարոյցներից, միայն դասական լեւուների գիտութեամբ, հարեանցօրէն ծանօթանալով տարրական առարկաների հետ և առանց ամենայն զարգացման:

Իսո՞ք մեծամաների ընդարձակ բաղմահոջակ զարոյցը, 870 աշակերտներով, Տէմլայի վերայ է գտնվում: Լօնդօնից երկաթուղով մի ժամ ճանապարհի հեռաւորութեամբ, Աշակերտը վճարումէ տարին 1400 մ. բացի հագուստից և իւր ձեռաց կամ վարկուծեան ծախսերից, բոլորը հասնումէ 1700 ման: Անգլիացին զրկումէ իւր անձն շատ անգամ, իւր որդուն աբխաթոկոստական զարոյցում ղետեղելու համար, որպէս զի մեծամեծների զաւակների հետ կրթվելով և նոցա ընկեր լինելով ապագայում՝ նոցանից պաշտպանութիւն գտնէ, որ և կատարվումէ: Որովհետև հազիւ թէ ուրիշները անգլիացիների չափ համակրութիւն պահպանում լինին բոլոր կեանքի մէջ առ իւրեանց ընկերները և այն զարոյցը, որի մէջ կրթվել են: Ոչ մի անգլիական զարոյցը չէ պահպանում հին աւանդութիւններ այնքան, որքան Իսոնեանը: Նա աշխատումէ որ բոլոր ուսուցիչներն իւր հին աշակերտներից լինին: Գասագրերը, կենցաղաւարութիւնը, դասասացութեան եղանակը, շատ դարերից ի վեր չեն փոխվում, կամ չափազանց սակաւ զիջումն են անում նորագոյն պահանջներին: Մինչև այժմ գործ է ածվում՝ Էդուարդ Զի հին լատիներէն դրված քերականութիւնը:

Փոքր աշակերտները 7 խմբակ են կազմում և պարապումեն վարագոյրներով բաժանված միենոյն սենեակի մէջ: Սորանից ծագած աղմուկին հետզհետէ ընտելանումեն աշակերտները և լաւ պարապումեն: Իսոնի աշակերտների մէջ առանձին սովորութիւն կայ փախուստ անունով: Նոքա աղատ են միշտ զարոյցից զուրս գալու, բայց աղատութեան ևս սահման կայ: Եթէ այս միջոցին աշակերտը կհանդիպի ուսուցչին, նա պիտի ցոյց տայ թէ կամենումէ փախել և պիտի պահէ թուփի կամ ծառի ետև, ուսուցիչը նորան չի պատժի, որովհետև տեսնումէ որ աշակերտը նորանից երկիւղ կրեց: Իսկ եթէ փախելու ցոյցեր չի տայ, աշակերտը խտտութեամբ կպատժվի:

Բոգրի քաղաքը իւր բաղմահոջակ զարոյցով Լօնդօնից 120 վերստ հեռու է: Այստեղ ուսուցիչ ամեն օրինաւոր անգլիացին կարող է լինել: Աշակերտները միջին դասակարգի որդիներ են: Նորանոր եղանակներն այստեղ աւելի մուտք ունին: Սորա աշակերտներն աւելի լրջմիտ աշխատութեամբ են զբաղած: Ուստի համալսարանի աշխատող մարդիկ Բոգրի աշակերտներից են: Ուսումնական պարապմունքն այստեղ աւելի ընդարձակ են քան թէ միւս քերականական զարոյցներում: Բնական գիտութիւններն և հիմնաւորապէս են ուսումնասիրվում: Երաժշտութիւնը և նկարչու-

Թիւեր շատ յառաջացած են, որոնց համար աշակերտներն առանձին պարգևներ են ստանում:

Ճեմ. Ե. Կաս. աշ. Ա. Զ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Յուլիսի 22-ին մեծ հանդեսով տօնվեցաւ Ս. Էջմիածնում Վաթուղիկէ Ս. Էջմիածնի տօնը: Սոսորական մաղթանքից յետոյ Միաբանութիւնը ներկայացաւ Վեհափառ Հայրապետին և ընդունեց նորին Վեհափառութեան օրհնութիւնը: Ս. Էջմիածնի Վեհափառ Գահակալը այս խօսքեր բարեհաճեց ուղղել Միաբանութեանը. «Հրաշափառ է տօնս, վասն զի այս տօնը կ'ապականի ամեն Հային ուր ուրիք կայ: Ուրեմն հայկական է տօնս և ամեն Հայն կ'տօնէ այս տօնը մեծ հանդեսով: Իսկ դուք ամենքից աւելի տօնեցէք և ցնծացէք: Սա ձեր իրաւունք է, վասն զի սուրբ Գրիգորի մեծ տաճարի պաշտօնեաներ էք: Բայց այս իրաւունքի հետ ունիք և պարտերն: որոնք նշոյւպէս ամեն Հայերի ունեցած պարտերից աւելի են: Ուրեմն իրաքանչիւրն ըստ իւր աստիճանի թող հոգով և ճշմարտութեամբ ծառայէ Մայր Աթոռին թէ բարոյապէս և թէ նիւթապէս աւելի քան թէ իւր ծանօթներին, իւր ազգականներին, իւր անձին, որպէս զի պարտերիդ հետ կապված լինին իրաւունքներդ: Այս սուրբ տեղում իջեալ Միածինը պարգևէ ձեզ ամենայն շնորհներ խաղաղութեամբ և աշխատասիրութեամբ կենցաղավարելու, ամէն»:

Յետոյ ճեմարանի աշակերտներ ներկայացան և ճառ մատուցին:

Ահա այն ճառը որ կարդաց Ս. Վաթուղիկէ Էջմիածնի տօնի օրը Ե. դասարանի ընտիր աշակերտներից մին—Յակոբ Պեքարեան:

ՎԵՀԱՓԱՐԱՌ ՏԻՐ,

Բարէ, որքան քաղցր է արգեօք հոգևոր որդւոցս Վեհափառութեանդ յօրինել բանս գովութեան և երախտագիտութեան և հոշակ ընդ ամենայն կողմանս հաթկանել զազգասէր դործոց Հօրդ հասարակաց: Զի ահա բազումք հօլովեցան դժբախտ, յորմէ հետէ զիւր հաստատութիւն կտրաւ Մայրս մեր եկեղեցի, որ եղև Աթոռ Հայրապետական ամենայն ազգիս և որում բազումք եղին ժառանգողք և բազում վարդապետ իշխանութեանդ, առ որովք է զի փառք տանս թուէր ցանկալի ազգաց համայնից բնակիւոց շուրջ դմեօք: Է զի փոռք տանս զոմանս ի նախանձ զրգուէր և ոմանց ուրախութիւն և ցնծութիւն առնէր, և է զի Պարթևն այն մեծ, զՍահակ ասեմ, աջակցեալ ընդ Մեսրոպայ առնէր զՍա աղբիւր լուսոյ ճշմարտութեան կրօնիս և աղբիւր ամենայն կենցաղազօրութեան զիտութեանց, յորս ոչ միայն վայելէին որդիք Թորգոմեան ազինս, այլև ազգք մերձաւորք հիւսիսականք, եղև դարեալ զի թափուր գտաւ Մայրս Ս. եկեղեցի անշքացեալ ի նախ-